



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
ՈՐՈՇՈՒՄ**

N 535 - Ա


14 հոկտեմբերի 2021 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ  
2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի N 245-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 45-րդ կետի պահանջները և Անժելա Վարդանյանի 2021 թվականի հոկտեմբերի 12-ի դիմումը որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2021 թվականի մայիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների կոլեգիալ կառավարման մարմինների՝ առանձին և միացյալ խորհուրդների ցանկն ու կազմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի հունիսի 17-ի ու հունիսի 18-ի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 245-Ա որոշման N 2 հավելվածի 44-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծակքար գյուղի միջնակարգ և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովասարի Բախտիբեկ Մուրադյանի անվան միջնակարգ դպրոցների միացյալ կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի Ծովասարի Բախտիբեկ Մուրադյանի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական խորհրդի ներկայացուցիչ Անժելա Արշավիրի Վարդանյանի լիազորությունները՝ դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին մասնակցելու հիմքով կասեցնել՝ մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի անցկացումը:

14.10.2021

  
 ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ  
 Վարչական ՍԱՐԳՍՅԱՆ  
 ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԵՆ 3710840503

ՄԱՐԶՊԵՏ    Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ  
 ք. Գավառ